

**Բանալի բառեր՝** վարկային պորտֆել, բանկային համակարգ, սպառողական վարկ, ակտիվներ, արտարժույթային բաղադրիչ, չաշխատող վարկեր, ժամկետանց պարտավորություններ, իրացվելիության ռիսկ:

**ՀՏԴ 336**

## **ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐՈՒՄ ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾՅՈՒՂԱՅԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

### **Լուսինե ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Տնտեսագիտության թեկնածու,  
Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական  
համալսարանի Երևանի մասնաճյուղի «Էկոնոմիկա»  
ամբիոնի դոցենտ*

**Ա**ռևտրային բանկերի կողմից իրականացվող վարկային քաղաքականության արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է վարկային պորտֆելի ձևավորման առանձնահատկություններով: Հետևաբար, ՀՀ առևտրային բանկերի կողմից ձևավորված վարկային պորտֆելի եկամտաբերության վերլուծությունը պայմանավորված է նրա ճյուղային կառուցվածքի, ծավալների, առկա ռիսկերի, վարկառուի յուրաքանչյուր խմբի հետազոտության անհրաժեշտությամբ:

2015-16թթ. 4-րդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ առևտրային բանկերի կողմից հաճախորդներին տրամադրված վարկերի ծավալները բավականին փոփոխվել են՝ արձանագրելով հիմնականում տարեկան աճ: 2016թ.-ի դեկտեմբերի վերջի համեմատ՝ առաջին կիսամյակի կտրվածքով, առևտրային բանկերի վարկային պորտֆելն աճել է 48,7 մլրդ. դրամով, կամ 1,9%-ով, իսկ 2016թ.-ի տարեկան ստուգած հաշվետվությունների տվյալներով՝ այդ աճն կազմել է 2,9%:

2017թ.-ի երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ ՀՀ առևտրային բանկերի շրջանակում խոշորագույն վարկատու է հանդիսացել Ամերիաբանկը, որի կողմից հաճախորդներին տրամադրված վարկերը կազմել են 405,2 մլրդ. դր. (ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր վարկային պորտֆելի 15,7%-ը): Հաճախորդներին տրված վարկերի ծավալով երկրորդը Արդշինբանկն է (354,5 մլրդ. դր.), երրորդը՝ Հայֆինանսբանկը (305,4 մլրդ. դր.): Երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ խոշոր վարկատուների հնգյակում են եղել Նաև. Անելթե Բանկը և Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկը: Ամենափոքր վարկային պորտֆելն ունեցել է Մելլաթ Բանկը: Այսպիսով, տվյալ ժամանակահատվածում վարկային պորտֆելի մեծությամբ չորս խոշորագույն բանկերին միասին բաժին է ընկել ընդհանուր վարկերի կեսից ավելին: Ըստ բանկերի հաշվետվությունների, 2017թ.-ի երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ հաճախորդներին տրված վարկերի ընդհանուր ծավալը կազմել է 2 տրիլիոն 578,3 մլրդ. դր., այսինքն տարվա երկրորդ եռամսյակի ընթացքում աճել են շուրջ 42 մլրդ. դր.-ով կամ 1,6%-ով:

Իսկ եթե փոփոխությունը դիտարկում ենք մեկ տարվա կտրվածքով՝ 2016թ.-ի երկրորդ եռամսյակի վերջի համեմատ, ապա առևտրային բանկերի կողմից հաճախորդներին տրամադրված վարկերի ընդհանուր ծավալն աճել է 14 %-ով:

2017թ. նոյեմբեր ամսվա տվյալներով, ի տարբերություն երրորդ եռամսյակի տվյալների, առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերն ըստ տնտեսության հատվածների աճել են 97,8%-ով:


ՀՀ Կենտրոնական բանկի կողմից ներկայացված տվյալների համաձայն բանկային վարկավորման ընդհանուր ծավալը 2017 թ.-ի հոկտեմբերի 1-ի դրությամբ տարեկան կտրվածքով աճել է 13,9%՝ կազմելով 2,495 տրիլիոն դր. կամ 0,9% եռամսյակային աճով: Իսկ առանց երկարաձգված և ժամկետանց վարկերի, Հայաստանի բանկային համակարգի վարկային ներդրումները տարեկան կտրվածքով աճել են 14,4%, եռամսյակային կտրվածքով՝ 0,4%, այսինքն մինչև 2,331 տրլն. դր.:

**ՀՀ առևտրային բանկերի վարկերն ըստ տնտեսության հատվածների (մլն. դր.)<sup>1</sup>**

<b>Վարկեր</b>	<b>2017թ. III եռ.</b>	<b>2017թ., նոյեմբեր</b>
Ռեզիդենտներին	2,275,713	2,369,755
Ձեռնարկություններին	1,289,944	1,347,170
Տնային տնտեսություններին	819,860	849,103
Շահույթ չհետապնդող կազմակերպություններին	90,701	94,591
Այլ ֆինանսական կազմակերպություններին	75,209	78,890
Ոչ ռեզիդենտներին	232,905	195,493
Ընդամենը	2,509,104	2,565,248

<sup>1</sup> ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկ: Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալներ, 2017թ., էջ 1:

Հաճախորդներին տրամադրված վարկերի ծավալները 2017թ. երկրորդ եռամսյակի վերջի դրությամբ<sup>2</sup>



Տարվա կտրվածքով բացարձակ մեծությամբ, ամենից շատ՝ 74,7 մլրդ. դր.-ով աճել է Ամերիաբանկի կողմից հաճախորդներին տրված վարկերի ծավալը, իսկ Հայփրոնբանկի վարկային պորտֆելն աճել է 73,1 մլրդ. դր.-ով, Կոնվերս բանկին՝ 53,6 մլրդ. դր.-ով: 2016թ.-ի համեմատությամբ բանկային ոլորտի ակտիվներն աճել են 16,7%-ով և 2017թ.-ի մարտի 31-ի դրությամբ հասել 4,096 մլրդ. դր.:<sup>3</sup>

Հետևաբար, տարվա ընթացքում աճել են բոլոր բանկերի վարկային պորտֆելները՝ բացառությամբ Էյչ-Էս-Բի-Սի Բանկ Հայաստան և ՎՏԲ-Հայաստան բանկերի, որոնց վարկային պորտֆելները կրճատվել են համապատասխանաբար՝ 50,3 և 30,2 մլրդ. դր.-ով: Ամենից շատ՝ 188,7 մլրդ. դր.-ով աճել է Անելիք բանկի վարկային պորտֆելը:

Անհրաժեշտ է նշել, որ Հայաստանի բանկային համակարգի վարկային պորտֆելում հետազոտվող ժամանակահատվածում շարունակել է գերակշռել արտադրության բաղադրիչը՝ 2017 թ.-ի հոկտեմբերին կազմելով 63,3% կամ 1,475 տրիլիոն. դր.: Տարեկան աճը համապատասխանաբար կազմել է 9,7%, իսկ երրորդ եռամսյակում՝ 0,8%: Միևնույն ժամանակ, դրամային վարկերի տեսակարար կշիռը կազմել է 36,7% կամ 856,6 մլրդ. դր., բացարձակ արտահայտության տարեկան 23,6% առավելությամբ, իսկ եռամսյակային անկումը կազմել է 0,2%:

Առևտրային բանկերի կողմից կատարված կանխատեսումների համաձայն վարկերի տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում կմեծանա նաև 2018թ.-ի վերջին՝ համեմատ նախորդ տարիների, ավելանալով 7,6%-ով: Բանկային համակարգի ակտիվների վերոնշյալ աճը հիմնականում կանխատեսվում է ի հաշիվ վարկերի, որոնց տեսակարար կշիռն ընդհանուր ակտիվներում 2018թ. վերջին կկազմի 66,4%:<sup>4</sup>

ՀՀ առևտրային բանկերի վարկային պորտֆելի աճը նախատեսվում է հիմնականում ի հաշիվ սպառողական վարկերի մասնաբաժնի ավելացման (տարեկան միջինում 14,9%):

Բացի դա անհրաժեշտ է փաստել, որ հետազոտվող ժամանակաշրջանում գրանցված վարկային պորտֆելի աճին զուգընթաց ընթացիկ տարվա օգոստոս ամսվա վերջի դրությամբ Հայաստանում գործող առևտրային բանկերի ակտիվների 6,73%-ը դասակարգվել են որպես չաշխատող և տարետևգրի համեմատ ցուցանիշն աճել է 0,4%-ով: Չաշխատող վարկերի առավել մեծ մասը կազմել են սպառողական վարկերը, որոնց տեսակարար կշիռը 1,22% է: Տեսակարար կշռի ցուցանիշով սպառողական վարկերին հաջորդում են արդյունաբերության և առևտրի ոլորտներին տրամադրված չաշխատող վարկերը՝ համապատասխանաբար 1,19 և 0,94%: Չաշխատող վարկերի հարաբերությունն ընդհանուր վարկերին 2017թ.-ի երրորդ եռամսյակից սկսած աճել է՝ մինչև 7,2 կետով, իսկ չորրորդ եռամսյակի կեսերին՝ նոյեմբերի 30-ին ավարտված ժամանակահատվածի համար, մի փոքր նվազել է՝ համապատասխանաբար կազմելով 6,8%:<sup>5</sup>

Երկարաձգված և ժամկետանց վարկերի տեսակարար կշիռները 2017 թ.-ի հոկտեմբերի 1-ի տվյալներով համապատասխանաբար կազմել են՝ 5,02% (նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 4,8% և 4,7% համեմատ) և 1,52% (նախորդ տարվա 2,1% և 1,39% համեմատ): Հայաստանի բանկերում ժամկետանց վարկերի ծավալը տարեկան կտրվածքով կրճատվել է 17,7%, երրորդ եռամսյակի աճը կազմել է 10,2% (մինչև 37,8 մլրդ. դր.), իսկ երկարաձգված վարկերի ծավալն աճել է 18,3%, միայն երրորդ եռամսյակում՝ 7,8%, (մինչև 125,3 մլրդ. դր.): Ընդ որում, երկարաձգված վարկերի ծավալներում գերակշռող են կարճաժամկետ վարկերը, իսկ ժամկետանց վարկերում՝ երկարաժամկետ վարկերը:

Այսպիսով, հաշվի առնելով վերոնշյալը, կարելի է փաստել, որ վարկային պորտֆելի ծավալների աճն ի հաշիվ սպառողական վարկի կարող է առաջացնել բանկային համակարգի ակտիվների եկամտաբերության անկում, ինչպես նաև ժամկետանց պարտավորությունների ծավալների աճ, որն էլ իր հերթին կանդրադառնա բանկային համակարգի իրացվելիության և կայունության վրա: Հետևաբար, կարելի է եզրակացնել, որ հետազոտվող ժամանակահատվածում ՀՀ բանկային համակարգում դիտվել է վարկային պորտֆելի դիվերսիֆիկացիայի նվազեցում, որը հանգեցնում է վարկային ռիսկի ավելացմանը: Այս եզրահանգումը հաստատվում է վարկային ներդրումների ծավալում ժամկետանց պարտավորությունների տեսակարար կշռի մեծացմամբ:

<sup>2</sup> www.b4b.am/ Հայաստանի խոշորագույն վարկատուները. Թարմ ցուցանիշները ՀՀ առևտրային բանկերից:

<sup>3</sup> Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, Մայիս 2017թ., էջ 5:

<sup>4</sup> ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2016-18թթ., էջ 13:

<sup>5</sup> Հայաստանի ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշներ, 2017թ., էջ 1:

Հետևաբար բանկերի վարկային քաղաքականության նկատմամբ ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված նվազագույն պահանջների՝ մասնավորապես կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվների (31.10.17թ.-ի տվյալներով՝ Ն1(2) – 19,1; Ն2(1) – 32,3; Ն2(2) – 138,8)<sup>6</sup> չպահպանման դեպքում բանկերի լուծարման հավանականությունը մեծանում է: Սակայն սահմանված նորմատիվների պահպանումը համարվում է անհրաժեշտ, բայց ոչ բավարար պայման առևտրային բանկերի գործունեության կայունության համար: Այդ իսկ պատճառով, իրացվելիության ռիսկի նվազեցման կիրառելի մեթոդ կարելի է համարել բանկային համակարգում ներքին նորմատիվների մշակումն՝ առավել խիստ պահանջներով, որոնց պահպանումը կնպաստի վարկային պորտֆելների եկամտաբերության մեծացմանը:

Առաջարկվող մեթոդի կիրառումը հնարավորություն կտա բարձրացնել բանկային ռեսուրսների օգտագործման ճկունությունը, պահպանելով կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը՝ ակտիվ վարկավորելով նաև տնտեսության իրական հատվածը:

### Օգտագործված գրականության

1. ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկ: Առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերի ծավալներ, 2017թ.:
2. Հայաստանի բանկային ոլորտի ընդհանուր նկարագրություն, Մայիս 2017թ., 38 էջ:
3. ՀՀ բանկային համակարգի հնարավոր զարգացումները 2016-18թթ., 33 էջ:
4. Հայաստանի ֆինանսական կայունության հիմնական ցուցանիշներ, 2017թ.:
5. Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն: ՀՀ Բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները, 2017թ.:
6. [www.b4b.am/](http://www.b4b.am/) Հայաստանի խոշորագույն վարկատուները. Թարմ ցուցանիշներ ՀՀ առևտրային բանկերից:

Ներկայացվել է 31.01.2018թ.  
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.

<sup>6</sup> Ֆինանսական կազմակերպությունների վիճակագրություն: ՀՀ Բանկային համակարգի կապիտալի համարժեքության և իրացվելիության նորմատիվները, 2017թ.: